ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ· ՆԻՒ ԵՈՐՔ, ՓԵՏՐՈՒԱՐ 15, ԹԻՒ .4 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 148

ՊԱՏՄԱՆԲ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԻ տարեկան բաժանորդագին է երկու տոլար, կամ 10 ֆրանք, (4 ռուպլի), ամեն երկրաց համար։

Հասցէ— Editor of Haik,
341 West 23rd St. New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական նշմարք.—Ռուսիոյ քաղաքակրթիչ դերը.—Հայերն ալ կրնան օգտուիլ Քլոնտայքի ոսկեխառն հողերէն.—Հայոց համազգային կրօնական ժողով ի Նիւ Եորք.— «Փարոս» ի՞նչ կ'ասէ «Տիզրիս»ի մասին.— Երիտասարդաց երգը.—Այլևայլք.—

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Տարակոյս չկայ թէ Ռուսիոյ մասին ներկայ թուոյ առաջնորդող յօդուածը ամեն հայ ուրախութեամբ պիտի կարդայ։

Ամերիկայի հայ երիտասարդներուն համար Հայաստանէն հարանցուներ բերել տալու մասին գրած էինք մեր նախորդ թուով։ Երիտասարդ մը մեզ կը հարցնէ նամակով թէ «այս արդեօք կարելի՞ է։»

Այո՛ կարելի է։ Օսմանեան կառավարութիւնը արուներուն գաղթման դէմ արգելք շատ հաներ է, բայց ոչ երբէք էգերուն։

Նաև պէտք է հասկցուած լինի թէ աղջիկ մը ու զոյգ երիտասարդը պիտի պարտաւորի անոր ճամբու ծախքը վճարել։ Ծախքին որքանութիւնը տեղւոյն հեռաւորութեան համեմատ կը լինի։

Երբ երիտասարդներէն պատասխան առնունք և հասկնանք թէ քանի հոգի յօժար է ծախքը վճարել, այն ատեն պիտի ծանուցանենք թէ որու՞ պիտի յանձնեն դրամը և ո՛րքան։ Դրամը խմբագրութեանս չպիտի յանձնեն, այլ այս մասին աշխատելու համար կարմուելիք վստահելի օտար յանձնախմբի մը։

Խմբագրութիւնս չէ կարող ամենեին առանձին նամակով պատասխան տալ անոնց որք 50 սենթի ծախքը, արձանագրութեան համար, չեն յղեր մեզի կանխիկ։

Ասիկա մեր գաղթականութեան համար մահու և կենաց խնդիր է· տեսնենք թէ ա՞յս փորձին մէջ ինչպէս պիտի գըտնուին մեր երիտասարդները· լո՞ւրջ են թէ թեթեւամիտ և անհոգ։

***

Եթէ ճշմարիտ է թէ ոմանք ՀԱՅԿԻ խմբագրականները զանց կ'անեն և միայն այլևայլքը կը կարդան, այնպիսիներուն համար չ'արժէր ամենեին այս թերթին բաժանորդ գրուիլ։ ՀԱՅԿը յաւէտ հանդէս է քան թէ լրագիր։ Խորհող մարդոց կ'ուղղուի այն ոչ թէ շողոքորթութիւններով և հաղար ու մէկ ոչինչով զբօսնուլ ուզողներու։

Մեր Մարտ մէկի թուովը պիտի ծանուցանենք թէ քանի բաժանորդ ունինք Ամերիկայի մէջ նահանգ առ նահանգ, քաղաք առ քաղաք։ Շատ հետաքրքրական պիտի լինի այդ վիճակացոյցը, և եթէ բաժանորդաց թիւը չափազանց չնչին գտնուի, ատկէ պիտի հետեւի երկու բաներ մէկը—կամ ՀԱՅԿը արժանի չէ Ամերիկայի Հայոց, կամ Ամերիկայի Հայք արժանի չեն ՀԱՅԿԻՆ։

Որպէս զի այս խօսքերուն մէջ տկարութեան նշան մը տեսնել կարծելով չխենթենան մեր թշնամիները, կը յայտարարենք թէ ՀԱՅՑԲի հրատարակութիւնը պիտի շարունակուի որքան քիչ ալ ըլլին զայն կարդալու կարողութիւն կամ համբերութիւն ունեցողները։

***

Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան ամենէն բազմարդիւն անդամներէն միոյն, Հայր ԳԱՐԵԳԻՆ Վ. ԶԱՐԲՀԱՆԷԼԵԱՆԻ Գրական գործունէութեան յիսնամեայ յոբելեանը կատարուեցաւ անցեալ ամիս, ի վանս Ս. Ղազարու։ Գեր. Յոբելեարին մասնաճիւղն եղած է Հայոց գրականութեան պատմութիւնը։ Ներհունօրէն գրած է «Պատմութիւն Հայկական Հին Դպրութեան», որ երրորդ տպագրութեան հասած, է և զՊատմութիւն Հայկական Նոր Դպրութեան։ Ունի այդ ճիւղին վերաբերեալ ուրիշ պատուական երկեր ալ։ Մեր ազգային գրական վերածնութեան անմահ Հօր, ՄԽԻԹԱՐԱՅ, արժանաւորագոյն և բազմարդիւն սաներէն է Հ. ԶԱՐԲՀԱՆԷԼԵԱՆ, և մենք այս առթիւ կը մատուցանենք սիրելի Վարդապետին մեր ջերմագին շնորհաւորութիւններն յերախտագէտ սրտէ և որդիական պատկառանօք։

***

Տիկին Բրուտեան կը գրէ մեզ թէ ոմանց կարծածին պէս առարկելի բան մը չէ Ուստըրի Հայ Տիկնանց ձեռնարկը որով կ'ուզեն որբեր բերել Հայաստանէն և անոնք խնամել հոս իրենց ձեռքին տակ։ Հոս հայ տիկնանց խնամակալութեան ներքեւ վտանգ չկայ որ որբերը հայերէն լեզուն մոռնան կամ ազգէն օտարնան, մինչդեռ Հայաստանի մէջ ամեն տեսակ վտանգ կայ։

***

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹԻՒՆ

գրեց

ՏՕՔ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

Ազատ ի գիտութիւնս (Licencie' es Sciences)

Կ.Պոլիս, Տպ. Նշան Կ. Պէրպէրեան

1898

144 էջ. գին 10 դահեկան

***

ՌՈՒՍԻՈՅ ՔԱՂԱՔԱԿՐԹԻՉ ԴԵՐԸ

Ա.

Եւրոպիոյ տակաւին լաւ ծանօթ չէ այն ցեղը որ, կ'երեւի թէ, վաղը իւր առաջնորդը պիտի ըլլի դէպ ի բարձրագոյն քաղաքակրթութիւն մը։ Մեր՝ Հայոցս ալ ծանօթութիւնը Ռուսաց մասին աղօտ և թերի է։ Այնքան միայն գիտենք թէ Ռուսիա բաղդատաբար երիտասարդ ազգ մ'է, բարբարոսութենէ նոր ելած։ Բայց ի՞նչ է ռուս ժողովրդի, բուն մուժիկ ցեղին, հոգեկան կազմութիւնը, և, երբ զարգանայ, ինչպիսի զօրութիւն պիտի ըլլի նա աշխարհի համար, այդ մասին քիչ բան գիտենք ու կը լռենք։

Մեր նախորդ թուով կ'ըսէինք թէ Ռուսիա, եթէ Գերմանիոյ և Ֆռանսիոյ դրութեամբ զինուոր հանէ, կրնայ աւելի քան քսան միլիոն զօրք կազմել։ Աշխարհ ատոր կէսն ալ երբէք տեսած չունի։ Եւ ինչպիսի զօրք։ Ամենէն անձնուէր, ամենէն քաջ և տոկուն զօրք։ Իւր զինուորական պարտականութիւնը կատարելու համար ամենայանդուգն և աներեւակայելի զոհողութիւններն ընելու ընդունակ է այն զօրքը որ մինչև անգամ կամովին և գիտութեամբ կ'երթայ խրամը կը լեցնէ, որպէս զի իւր դիականց վրայէն իբրև կամուրջէ անցնելով՝ իւր ընկերք հասնին թշնամւոյն բերդին։

Ռուսիա ի՞նչ նպատակի պիտի ծառայեցնէ իւր սոսկավիթխար զօրութիւնը զինուորական. արդեօք այդ ֆիզիքական անսահման ուժին հետ ունի՞ բարոյական խթան մը, հոգեկան բարձր միտումներ, սրտի ազնիւ ներշնչումներ։ Այդ մասին մեզի բաւական լոյս կուտայ Ճարճ Ուաշբըրնի համառօտ բայց յոյժ շահեկան ուսումնասիրութիւնը՝ Քանթէնփօրէրի Րիվիուի մէջ, որմէ կ'առնունք հետեւեալ ամփոփումը։

Բ

Լատին և Տեւտոն ցեղերն շատ բան տուած են ի զարգացումն գրականութեան, գիտութեան, արուեստից, նիւթական հարստութեան և ընկերային ու քաղաքական կազմակերպութեանց, բայց վրիպած են քրիստոնէական բարձր տեսակէտը իրա-

գործելու ամբողջական եղբայրութիւն հաստատելու։ Արդեօք բանաւոր է կարծել, որպէս Ռուսք ամենք կը պնդեն, թէ ոչ ցեղին վերապահեալ է նոր և բարոյական կարգի կատարելագործում մի ուղղ աշխարհի քրիստոնէութեան։ Ռուսական այս երազը չէ ամենեին արտաքոյ։

Ռուս մուճիկը, աղուտ և յոյժ ագէս, ոգեւորուած, հարազատասիրութեան տակ անզգայ, տխուր տպաւորութիւն կը թողու Եւրոպացի ուղեւորին վրայ։ Բայց այդ գրտաքին երեւութին ներքեւ ազնիւ բան մը վրայ թագուն, կ'ուզեն ռուս ուսուցիչներն և մենք այ գոնէ ընդ աղօտ կը տեսնենք այդ բանին նշոյլները։

Մուճիկ։ Դիտնական խորին զգացում ունի։ Ամեն բան, մինչև կեանքը, նուիրել յօժար է իր հաւատոյն համար։ Ընդունակ է սուրը և ազնիւ կեանք մը վարելու, ինչպէս կը տեսնուի հերձուածելոց ոմանց վրայ։ Զարմանալի անկեղծութեան և հոգեկան բարձր ուսումնասիրութեան օրինակները շատ յաճախ կը տեսնուին անոր վրայ։ Օրինակ մը յիշենք։ Տէրրյի գեղջուկ մը. Սիւտայէֆ անուն, իբրև քարակոփ գործատոր տարիներով աշխատած էր Ս. Փէդէրպուրգի փողոցներուն, բաւական լաւ աւուրչէք կ'առնուր բայց սիրտը անհանգիստ էր։ Օրթոտոքս հրեցի մը կը դիմէ. սա խրատ կուտայ գեղջուկին կարդալ զԱւետարան։ Սիւտայէֆ կը գնէ այրենարան մը և Աւետարանը և մեծ դժուարութեամբ կը սովրի կարդալ։ Կը զգայ թէ աշխարհը՝ ուր ինքը կ'ապրէր՝ չէր Աւետարանինը, այնինքն սիրոյ և ազնուութեան աշխարհ։ Կը դառնայ իր ընտիր գիւղը, նախ և առաջ կը բաշխէ ծաղքատ դրացիացը իր 1,500 ռուպլի խնայքը, կը պատուէ կը նեսէ իր տակտով փոխ տուած տակնուրուն պարտատերերը և կը սկսի իր ընտանեացը կարդալ Ս. գիրքը և սովրեցնել տանց թէ որպէս արժան է ապրիլ։ Ապա կը քարոզէ իր դրացիներուն։ Մեռած տաներ իրր 1,000 աշակերտ ունէր։ Աւրիկա օրինակ մը վրայն է, որ Մուճիգի բնութիւնը կ'արտայայտէ։ Մուճիգը անձնազոհութեան վսեմ հոգին ունի։ Կը սիրէ իր կեանքը, բայց պատրաստ է նուիրել զայն ի սէր հաւատոյ, կայսերը, բարեկամի, կամ ինչ և լոյէ բանի որ իր իսկականն լինի։ Մահուան կը դիմագրաւէ, Սիպիրիան կ'արհամարհէ, աքսորը բանի տեղ չի դներ, թնդանօթին բերանն ալ կ'երթայ դիտութեամբ, իր պարտքը կատարելու համար։ Այսպէս է նա ոչ միայն ճգնաժամական պահուն, այլ կենաց սովորական, օրըստօրէ ընթացքին մէջ։ Պուլկարք կը վկայեն թէ վերջին պատերազմին ատեն ռուս զինուորները, որք առնուած քաղաքներուն մէջ կ'օթեւանէին, ճիշդ իրենց ընտանիքին անդամոց պէս էին, մանուկներուն նուիրուած, և միշտ պատրաստ օգնելու ամեն տեսակ գործի մէջ։ Ռուսիա կայանաւոր տարուած թուրք զօրքն ալ խոստովանած են ռուս գիւղացոյ ոյն մարդասիրութիւնը։ Սքոպէլէֆ զօրավարը թուրք վոխոտականներու եանէն անգամ մը հատաւ, Փիլիպուպոլոյ և Սադրիանուպոլոյ միջև։ Ռուս զինուորները, ճեպընթաց վազելով հանդերձ՝ վեր կ'առնուին այն երախտաքը զորս փոխոտական մայրերը ստինքուած էին լքանել ճամբուն վրայ, և այնպէս եղաւ որ առաջնորդող ջոկատին դրեթէ ամեն մէկ զինուորը մանուկ մը ունեցաւ զորավարի դրկին մէջ, և վերջապէս հարկ եղաւ զօրավարին կատեցնել դշնն և դանել կառքեր ու մարդիկ որ մանուկներու բազմութիւնը տանէին ուր որ կրնային խնամուիլ։ Զարմանք է որ ոչ մի մեծ ռուս նկարիչ երբէք նկարած է այդ տխրալի տեսարանը։

(Հոս պէտք է ընդմիջեմ յօդուածագրին խօսքը, ուսելցնելու համար թէ ինչքան տարբեր է ռուս զինուորը թուրք զինուորէն։ Հայկական ջախջերու ատեն, ի Սասուն և այլ ամեն տեղ, քարտրաութեամբ վարուեցան թրքերը շատ մը հայ մանուկներու հետ, որը հրայանի բռնեցին, որը ոտնակոխ ճմլեցին, և է՛ր զոր քաշեցին քեցեցին իր արտասուաթոր մայրերի գրկէն ու տունի վրայ բարձրացուցին։)

Ուշադրութիւն կը շարունակէ ցուցնելու թէ ուսնալ Ռուսը այնքան և այնպէս կը տարբերի ուսեալ Եւրոպացիէն ինչպէս և որքան կը տարբերի ռուս գեղջուկը Եւրոպացի գեղջուկէն։ Ուսեալ ռուսը կը հաւատայ իր ցեղին կոչմանը, և ունի գեղջուկին մարդասիրական բնաղդներն ու վեհ սիրտը։

Մահմեդական Սլաւներն իրենց ցեղին

համար կորսուած են (ինչպէս հայ Մահմետականներն իրենց ցեղին համար. խմբ.) նոյն կրօնը կարծես ջնջած է նոյն ցեղային յատկանիշները։ Անոնք ամենէն մոլեռանդ Մահմետականներն են և հետզհետէ թողլով Պալգաններն կը գաղթեն յԱսիա։ Աւստրիոյ և Պալգանեան պետութեանց Սլաւներն ազգայնութիւններու ստորաբաժանեալ են և աւելի իրենց ազգայնութեանը նախանձաւոր են քան ցեղին։ Ռուսիա ի նիզակակցութիւն բերած է զՊուլկարիա, Սերպիա և Մոնթէնէկրօ, և ռուսական իշխանութիւն կը հանդերձէ Մակեդոնիոյ համար։ Ալ տարակոյս չկայ թէ Սլաւը պիտի տէր լինի Հարաւային Արևելեան Եւրոպիոյ։ Խաղաղութեան այս շրջանը աւելի կարևոր յեղաշրջումներ կը գործէ քան երբէք ի հանդէս բերուած են մեծամեծ պատերազմաց շնորհիւ։ Հիմա շատ պայծառ կը տեսնենք թէ Սլաւը, ոչ թէ Յոյնը, պիտի ժառանգէ զԱրևելեան Կայսրութիւնը։ Իսկ թէ Ռուսիա ինչ պիտի ընէ զԿ.Պոլիս առնելէ յետոյ, Զարն ինքն իսկ կ'անգիտէ։ Սլաւական ցեղն դեռահաս է. ի՞նչպէս պիտի երևի նա երբ չափահաս լինի, և մինչև ո՛ր աստիճան պիտի կրնայ իրացնել իւր երազներն և ծաղկեցնել բարձրագոյն և լաւագոյն քաղաքակրթութիւն մը քան Գարևմտեանն, զայդ պիտի ցուցնէ յաջորդ դարը։ Որքան աւելի գիտակից և լուսամիտ լինի ցեղը՝ այնքան նուազ տեղի կուտայ Եւրոպական ազդեցութեանց։ Ռուսիա աւելի ռուսական է այսօր քան Աղեքսանդր Բ.ի օրով։ Բոպէտոնօսչէֆի բարեդէպ անհրաւութացումը և ներկայ Զարին աւելի ազատական գործերն անհամաձայն չեն որոշապէս ռուսական զարգացման հետ։ Ռուսիա ամ ըստ ամէն նուազ կախումն ունի Արևմուտքէն, իմացականօրէն ինչպէս քաղաքականօրէն և վաճառականօրէն։

Գ.

Տր. Ուաշպըրնի այդ տեսութիւնը բոլոր քաղաքակիրթ աշխարհի մէջ պիտի ողջունուի իբրև աւետիս մը։ Մեր ազգին համար մասնաւորապէս մխիթարական է հաւատալ այդ աւետեաց թէ ռուս ազգը ոչ միայն թուով խոշոր է այլ և բարոյապէս մեծ է ու բարի։ Որքան աւելի գիտակից լինի ռուս ժողովուրդն ինքն իրեն ու լուսաւոր, այնքան աւելի պիտի զուրգուրայ մեզի պէս թշուառ ժողովրդի մը վրայ որ նորա անմիջական հովանւոյն տակ դրուած է։ Ռուսիա որ կենաց ակն մը պիտի լինի ու հոսէ իւր մերձակենդ անացնող ջերմութիւնը Եւրոպիոյ վրայ՝ ի հարկէ պիտի հոսէ զայն մեր երկրին վրայ աւելի առատօրէն քանի որ մեր ցեղն ալ նոր կեանքի և բարձրագոյն քաղաքակրթութեան մը կարօտը կը քաշէ աւելի քան ուրիշ ազգեր։

Հոս ուրիշ խնդիր մը չօշափել կ'ուզենք հարևանցի։ Ռուսական տիրապետութիւնը ոչ միայն անխուսափելի այլ և տենչալի է Թուրքոյ և Եւրոպիոյ մէկ մասին համար, և մեզի՝ Հայերուս՝ կը մնայ հաստատուիլ այն կարծիքին մէջ թէ զուր է երազել անկախ Հայաստան մը։ Ինքնօրէն Հայաստան մը, ռուս բարերար և խնամակալ իշխանութեան ներքև՝ կը բաւէ մեզի։ Կը յուսանք թէ այլևս Հայ մը չկայ աշխարհի վրայ որ բաւական ագէտ լինի ասելու համար թէ Թուրք իշխանութիւնը նախամեծար է քան զռուսականը։

ՀԱՅԵՐՆ ԱԼ ԿՐՆԱ՞Ն ՕԳՈՒՏԻԼ ՔԼՈՆՏԱՅՔԻ ՈՍԿԵԽԱՌՆ ՀՈՂԵՐԷՆ

Զարմանալի բաներ կը պատմուին Ալասքայի Քլոնտայք գետին եզերքէն ոսկի ժողվելով հարստացողներու վրայ։ Հայերն ալ անշուշտ կ'ուզեն իմանալ այս մասին և անոնք թերևս ուզեն իրենց բաղդը փորձել։ Տանք ուրեմն քանի մը ընդհանուր տեղեկութիւն։

Ալասքա Միացեալ Նահանգաց հողաբաժին մ'է Ամերիկայի արևմտեան հիւսիսային ծայրը, արևելեան Սիպերիոյ դիմաց, հիւսիսային լայնութեան 60 և 70 աստիճաններուն միջև, ամենացուրտ և սակաւաբնակ երկիր։ Մեր Քալիֆոռնիոյ հայրենակիցներուն աւելի մօտ է վայրն, և թերևս անոնց մէջ փորձառուներ եղած են բաղդախնդրութեան այս նոր և զգլխիչ ասպարէզին վրայ, թէպէտ մենք բան մը չենք լսած մինչև այսօր։

1896ին էր որ Քարմէք անուն ոմն յառաջանալով Քլոնտայքի անծանօթ և անմատոյց ափունքը առաջին փորձն ըրաւ

և առ իւրաքանչիւր «փառնո» հող՝ հանեց տոլարի մը արժողութեամբ ոսկի։ Այս լուրը Իւքոն մօտաւոր գաւառը հասնելուն՝ ոսկեանշլիկները շտապաւ վազեցին դէպի Քլոնտայք, ամէն խուժ և խուժ առ ոտն կոխելով։ Եւ իրօք եղան ոմանք որք մինչև 10 տոլարի ոսկի հանեցին մէկ փառնոյ աղմէ։ Քալիֆոռնիոյ և Աւստրալիոյ ոսկեջերմին ամենատենդոտ աւուրները մէկ թանելաթայ հողէն շաղիւ մէկ տոլարի ոսկի կը հանուէր, մինչ Քլոնտայքի մէջ մէկ թանելաթայ տիղմը մինչև քառասուն հազար տոլարի ոսկի կրցած է ընծայել։ Բայց այս լուրերուն մարդիկ չաւատացին ի սկզբան, և ուստի քիչերը տեղերնէն շարժեցան։ Երբ զարմանալի լուրերը շօշափելի հաստատութեան հետ կրկին ու կրկին հասան, 1897 ին ամառը շատեր սկսան ոսկեջերմով բռնուիլ և հազարք հետ ի հետ վազեցին դէպի ոսկւոյ գաւառը։

Իրաւ, ուղևորներու նկարագրութենէն կը տեսնուի թէ մարդ շատ ջնելու է այդ ուղևորութեան մէջ։ Պէտք է անցնիլ լճերու և գետերու վրայէն, քալել կրճերու մէջէն ուր երբեմն տիղմը ծունկդ կ'ելնէ, վեր մագլցիլ ափափայքէ, 45 աստիճան զառիվերներ ելնել, որք ուրեք ուրեք բոլորովին ուղղահայեացի կը մօտենան, և այդ ժայռերու և ապառաժներու մէջէն ճամբորդել բեռը կռնակը զարկած՝ քանզի անասուն չէ կարող բանիլ։

Մարդիկ յանձն առին այդ ամեն դժուարութիւններն իսէր ոսկւոյ և ոմանք աւելի ու ոմանք նուազ վարձատրուեցան։

Ոսկի գտնողներէն զատ ուրիշ ոչ սակաւք ալ օգտեցան այս շարժումէն։ Ճամբուն վրայ հիւրանոցներ, ճաշարաններ, շատ նախնական տեսակէն, կարկատած են նախամեծանակ ոլիներ. և օթևան կայ ուր ջամակով տեղ և երկու ժամ կերակուր՝ ոչ անուտելի՝ կ'արժէ օրը երեք տոլար։ Կառքի մը տէրը օրը մինչև հարիւր տոլար կը շահի։ Լճերուն և գետերուն վրայ նաւարկելու համար ամենէն աման և պզտիկ նաւակները, Քլոնտայքի մօտ հասցնող վերջին լճին վրայ՝ ամեն մէկ նաւագնացութեան համար 300 տոլար կը բերեն։ Ամեն բան հաշուեցէք տասը համեմատ։

Կ'ասեն թէ հիմա հողերը գրեթէ բոլոր սեպհականուած են և անիրաւ դէմ ու ձեռնուն նոյն վերայ արձողներ չեն պակսիր։ Սովի լուր մ'ալ ելեր է և, որ յոռեգոյնն է, տեսակ մը մահատարաժամի գրոյց, որ օրը հինգ հոգի կը սանի եղեր։

Բայց յառաջիկայ գարնան անշուշտ մեծագոյն քան անցեալ ամրանը բազմութիւն մը պիտի խուժէ դէպի Քլոնտայք և տեղ տեղ երկաթուղի և դիւրացած ճամբաներ պիտի գտնէ—բայց թէ պիտի գտնէ՞ նաև ոսկի և որքանիք զուարթ պիտի վերադառնան, որքանիք պղջացած, զայդ չգիտեմ։

ՀԱՅՈՑ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ
Ի ՆԻՒ ԵՈՐՔ.

Լուսաւորչական ինչպէս նաև բողոքական Հայեր, 23 րդ. փողոցի եպիսկոպոսական մատրան մէջ մէկտեղ եկան Փետր. 6 ի կիրակին, և Հայր Վաղինակ Ծ. Վ. Սիսակեան պատարագեց ու քարոզեց, խօսեցան Պատուելիք Յակոբեան, Խաղայեան և Հայկունի, Տեարք Կիւլպէնկեան և Թաւշանճեան և Տր. Տարբեան, ամենուն ալ նիւթը լինելով քաղաքիս Հայոց Բարեգործական Ընկերութիւնը։ Ներկայ էին իբր 800 Հայեր, երկու սեռէն։ Թերևս Հայոց մեծագոյն ժողովն էր դա որ վերջին տարիներս երբէք եղած էր Նիւ Եորքի մէջ։ Լրագիրներն ևս տեղեկագրեցին զայն։ Հանգանակութիւնը չկրցաւ թէև ինչպէս ժամանակին՝ ամբողջանալ, հասաւ իբր 500 տոլարի։ Ահաւասիկ ցուցակը։

Տեարք

Կ. Կիւլպէնկեան և Յ. Թաւշանճեան 100 ական տոլար.—Եարալմեան, Ջաւըրճեան 50 ական տոլար.—Տր. Տարբեան, Եւդոկիաճեան, Տիկին Քասպիկեան, Տկն. Թաւշանճեան, Տ. Պետրիկեան, Դէլֆէյեան, Տոնչեան եղբարք, Զամալեան, 25 ական տոլար.—Տ. և Տկն. Գալուստեան 55 տոլար.—Տկն. Եւդոկիաճեան և որդի, 20 տոլար.—Տ. և Տկն. Հիւրմիւզ 15 տ.—Փաշմանեան եղբարք, Տկն. Տարբեան, Մելքոնս Գթածեան, Եղբարք Շահպազեան, Տիգրան Մեծիկեան, Սինան, Թադևոս Պարտիզպանեան, «Հայք»ի Խմբագրութիւն, 10 ական տոլար.—Օրիորդ Տարբեան, Արզումանեան, Գրիգոր Փափազեան, Յարութիւն Կիրակոսեան, Արմենակ Քիթապճեան, Յակոբ Մելքոնեան, «Տիգ-

րիոյի Վարչութիւն, Սարգիս Վահանեան, Մանուկ Տէրոյեան, Յովսէփ Փափազեան, Գաբրիէլ Սվազլեան, Սիմոն Պօյաճեան, Կիրակոս Պօյաճեան, Յովհաննէս Մանուէլեան, Համբարձում Ստեփանեան, Նահապետ Մարութեան, 5ական տ.—Կիրակոս Արամեան, Փափազեան, Ալթունեան, Գրիգոր Վահանեան, Աւետիս Տէսթէյեան, Պետրոս Թորոսեան, 2ական տ.—Մարտիրոս Զենոբեան, 3 տ.—Յովհաննէս Թէրզեան, Արթունեան, Հայ մը, Գրիգոր Խաչիկեան, Կարապետ Սվազլեան, Զօղեան, Ղազարեան, Մարուքէ Մարուքեան, մէյ մէկ տոլար։

«ՓԱՐՈՍ» Ի՞ՆՉ Կ'ԸՍԷ «ՏԻԳՐԻՍԻ» ՄԱՍԻՆ

«Այս օրերս (կ'ըսէ «Փարոս», խօսելով դիւրին մրցանակներու վրայ,) Նոր աշխարհի մէջ նոր հրատարակուող թերթ մը բանաստեղծութեան մրցում մը կը հաստատէ...։ Լաւագոյն բանաստեղծութեանց հեղինակներէն առաջին երեքին մասնաւոր նուէրներ պիտի տրուին Լրագրին վարչութեան կողմէ. ասոր ալ ընելիք չկայ։

Առանց բանաստեղծ ըլլալու հետաքրքրուեցանք սակայն մրցման պայմաններն աչքէ անցունել.

Քերականական կամ լեզուի սխալներուն երկրորդական կարեւորութիւն պիտի տրուի

Ուրեմն անկիւնի նպարավաճառը կամ շրջուն տէստանճի մը պիտի կրնա՛ն ամերիկեան թղթատարին յանձնել իրենց ներշնչումները, մրցանակի ակնկալութեամբ։ Հապա, միայն թէ... լաւագոյն կ'ընէք կարդալով յաջորդ պայմանը։

Այս մրցման մասնակցելու համար մրցակից պարտին բաժանորդագրուիլ լրագրոյս... և այս առթիւ եղած ծախքերը (°) հոգալու համար ղրկելու են մեզ մէկ մի բանաստեղծութեան հետ 10 սէնթի նամականիշ։

Արեւելքցիի ու Եանքիի հնարամտութիւնը միացած, (կը խորհրդածէ ՓԱՐՈՍ,) աւելի ճարտար միջոց մը չէին կրնար գտնել... բաժանորդ ճարելու համար։ Պակաս ըլլան սանկ մրցանակները որոնք բանաստեղծութեան ու գրական մրցումի խաղ մը կ'աղտոտեն։

ՓԱՐՈՍ, Թիւ 65

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՐԳԸ

Ո՞վ է նորէն որ գլխացաւ
Ինծի կուտայ՝ ա՛յ անիրաւ.
Տու՛ր կ'ըսէ տու՛ր երկու տոլար,
ՀԱՅՔին բաժնորդ գրուէ դուն ալ։
Երկու՛ տոլա՛ր, ծօ դու՞ն խենթ ես
Թէ զիս խենթի տեղ կը դնես։
Կարծես փարան փողոցներէ՞ն
Ես աս երկրին մէջ կը ժողվեմ։
Ինչու՞ս պէտք է վիճակագիր,
Հայ ու՞ր գտուի, ու՞ր չի գտուիր,
Ամուսնացի՞ր, կե՛ր, մի՛ ուտեր,
Օ՜ղ, ջու՜ր, բաղնիք, պարա՛պ խօսքեր։
Ուտել փիլաֆ, ճնկել պիրա,
Իմ գործիս ա՛ս շատ լաւ կուգայ.
Ձեռքս իդրոտինըս կը խաթեմ,
Տոլար մ'երկուք դուրս կը հանեմ։
Տոլար մ'երկուք ՀԱՅՔԻ՞Ն համար,
Ի՞նչ կ'ասես շա՜տ շատ է ազբա՛ր.
Շատ է, քիչ է, ի՛նչ և իցէ.
ՀԱՅՔին գրուիլ իմ գործըս չէ.
Թող տան ինծի մի գուլ գանակ,
Զարդ բուրդ անեմ Թրքաց բանակ։
Բայց գրուէ՛ դու՛ն, թող «Հայք» քեզ գայ,
Ես ալ կարդամ, դուն ալ կարդայ.
Նախ ես, վերջ դուն, ծօ ի՞նչ կ'ըլլայ,
Եղբայրութիւն միթէ չկա՞յ.
Թի րա լա լա, լա՛ լա՛ լա՛ լա՛...

ՇՕՂԱԿՕՂԱՔ

Բարեկամ մը կը գրէ Թրոյէն—

«ՀԱՅՔի պատուական գործակալը լաւ կ'աշխատի հոս, բայց այս թերթէն օգտուելու կարող գլուխներ շատ չի գտներ. Հայերս կ'երեւի թէ մեր եղածէն շատ աւելի յառաջացած կարծեր ենք մենք մեզ։»

Ուրիշ մը կը գրէ Լօուէլէն—«Թերթերու համեմատական արժէքը գիտցողներ չկան շատ. բան մըն է կ'երթայ։»

ՄՇԱԿ, Նոր տարւոյ առթիւ խօսելով հայ մամլոյ նիւթական վիճակին վրայ, կը ցուցնէ թէ շատ մը լրագիրներ տարուէ տարի աւելի նեղ կ'իյնան ու կը քայքային փոխանակ աւելի ամրնալու։

«...Երբ աղքատ է Հայոց մամուլը, կը նշանակի աղքատ է հայկական միտքը։ ...Չէ կարելի ամեն բան պահանջել գրողներից։ Հասարակութիւնն էլ ունի պարտականութիւններ։»

Տիար Նչիկեան կը գրէ մեզ Ֆրէզնոյէն թէ տեղւոյն Հայոց վիճակագիրն մեզ յղելէն յետոյ բաւական Հայեր գնացեր են հոն ուղղակի Տաճկաստանէն, մեծ մասամբ ընտանիքով, որոց թիւը կը հասնի 50 ի, այր, կին, մանուկ։ Կը խոստանայ Տ. Ն. Նորէն գրել մեզ այդ գաղութի վրայ։

ՀԱՅՐԻ պատասխաններ.

Մ. Թ.—Պրիճփորթ.—Ստացայ Ձեր նամակն և պարունակութիւնն։ Շատ լաւ։

Արմէն, Պոսթոն.—Եթէ կ'ուզէք որ ձեր քննադատութեանը պատասխանելու պատիւն անենք, հաճեցէք տեղն ի տեղը նշանակել թէ ո՛ր տարիներէն ո՛ր թիւերէն քաղած էք ձեր քննադատած իրաքանչիւր խօսքը։

***

Կ.Պոլսէն կը հեռագրեն Յունուար 29 ին թէ չարժի ցնցումներ զգացուած են հոն այն օր։

Ֆռանսայում հակահրէական յոյզը կը չարունակուի։

Հեռագիր մը կը գուժէ թէ Պալըգհիսար չարժէն աւերակ դարձեր է. բոլոր մզկիթներն, բանտք և հանրային չէնքեր և տներու մեծագոյն մասը հիմնայատակ են եղեր։

Փետր. 3 թուակիր հեռագիր մը կ'ասէ թէ Գէորգ իշխանին Կրետէի կառավարիչ կարգումը պահանջող ռուսական ծանուցագիրն այնպիսի խիստ ոճով տրուած էր որ Ռուսիոյ դեսպանը, զայն հաղորդելէ առաջ, հարկ դատեր է հեռագրել ի Բեղէրպուրգ և կառավարութեանը վերջին կամքը հարցնել։ Կոմս Մուրավիէֆ, Արտաքին Գործոց Նախարար, պատասխան է տուեր թէ Զարին անյեղլի որոշումն է որ Գէորգ իշխանը անուանուի։

Սուլթանին և Ուիլեամին միջև ամենասերտ բարեկամութիւն կը տիրէ։ Փատիչահը կայսեր նուիրեր է Երուսաղէմին մէջ այն տեղը ուր գերման եկեղեցի մը պիտի շինուի։ Գարտնը Գերմանիոյ կայսրը յերուսաղէմ ուխտի պիտի երթայ և մզտեսի կամ հաճի պիտի լինի։

Հէրալտի Թղթակից Պատ. Հէփուորթ իւր ուղևորութիւնն աւարտած է ի Թուրքիա և իւր վերջին նամակներն հրատարակած։ Թէև ունի սխալներ և թերի տեսութիւններ, բայց Իսկզբան կասկածուածին չափ գէշ չելաւ ամրողջութիւնը։ Հայոց դիւցազնական համբերատարութիւնը և մարտիրական ոգին կը հռչակէ և անվախ կը յայտարարէ թէ Օսմանցին չէ կարող բարեկարգել իւր երկիրը։

***

Պուլկարական գործակատարն ծանուցագիր մը ներկայացուցեր է Դրան՝ բողոքելու Իւսքիւսլի մէջ 592 Պուլկարներու կալանաւորմանը դէմ, որոց ոմանք չարչարուելով մեռած են ի բանտի։ Ծանուցագիրը ստիպողաբար կը պահանջէ որ հարստահարութիւնն անմիջապէս դադրի, որ զինուորները քաշուին այն տեղերէն, և որ այսինչ սպայք պաշտօնանկ լինին։ Այս կծու ծանուցագիրը մեծ յուզմունք պատճառեր է Թուրք նախարարութեան մէջ։

***

Սէյֆուլլահ փաշա 2000 զօրօք և երկու թնդանօթով գնայեր է Լուպարիգա գիւղը, Թրիքալայի մօտ, յոյներէն տուրք բռնի հաւաքելու։ Գիւղացիք կրակով պատասխաներ են։ Կռիւը յաջորդ օրն ալ կրկնուեր է։

***

Տր. Ճէյմս Անճէլ, Ամերիկայի դեսպան, և Պառոն Ֆոն Բալիչէ, աւստրիական դեսպան, ի միասին այցելելով ի Դուռն՝ փոխարինութիւն պահանջեր են այն անիրաւութեան զոր Հալէպի Թուրք իշխանութիւնք գործեր են տեղւոյն ամերիկեան հիւպատոսին դէմ, որ աւստրիական հպատակ մ'է։

***

Տ. Զինովիէֆ, Ռուսիոյ նոր դեսպանն ի Կ.Պոլիս, Հայաստանի վերաբերութեամբ կորովի լեզու մը կը գործածէ և Դրան կը հասկցնէ մինչև անգամ թէ Ռուսիա թերևս հարկ համարի գրաւել երկիրն եթէ Բրդերն չսանձահարուին։

Պարսից Շահը սպաննելու դաւակցութիւն մը երեւան հանուեր է ի Թեհրան։

«ՀԱՅՔ»Ի

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԷՆ

Ցատկապէս կը խնդրենք որ իրենց ջանքերուն արդեանց մասին խմբագրութեանս գրեն։

***

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հայքի խմբագրատունը կը գտնուին ծախու հետեւեալ գիրքերը։
(Գինը չընդունուած՝ չենք կրնար գիրք ուղարկել։)

—Աստուածաշունչ գիրք, պատկերազարդ, գրաբար, մեծ հատոր 11 տոլար։

—Բառգիրք Հայկազեան, հայերէնին դէմ յուն., լատ., պրսկ., են. բառեր դըրուած, և ընտիր մատենագիրներէ օրինակներով բացատրուած. չքնաղագիտական և հոյակապ գործ, երկու ահագին հատոր, կազմեալ. գին 40 տոլար։

—Անիի Աւերակք, 40 լուսանկար կրկնապատկեր, Բիւրքճեանի, ստէրիօսքոբով դիտելու, գին 8 տոլար։

—Nippur (տես Հայք, Թիւ 1, 1898). երկու հատոր, գին 5 տոլար։

—Միլտոնի Կորուստ Դրախտին, պատկերազարդ, գրաբար, 2 տոլար։

—Րաֆֆիի Խաչագողի Յիշատակարանը. 2 տոլար։

— » Խամսայի Մելիքութիւնները, 1 տոլար ու կէս։

Հետեւեալ գրքերը 50 ական սէնթի են.

Եղիշէ.—Աշըղ Ջիվանի Երգերը.—Արուեստ Ատենախօսութեան.—Մանրէաբանութիւն.— Մարգարան.— Համառօտ Ընդհանուր Պատմութիւն, Միջին Դարու.—Ընդհ. Պատմութիւն Կարքեդոնացւոց, Յունաց, Հռովմայեցւոց և Հայոց, ի մի հատոր.— Գիրք գրելու Արուեստը։

***

ԹԱՆԿ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին ձեռագիրներ (manuscripts) և դրամներ կը գնենք, ինչպէս և ուրիշ պատմական հնութիւններ։ Մեր վաճառատունն է ի թիւ 390 5 th Ave., Նիւ Եորք.

ՏԻԳՐԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ։

***

ՀԱՅ ՆԿԱՐԻՉ

Մ. Գ. ՍԷՐԱՅԼԵԱՆ

ARARAT FINE ART STUDIO,

Տնօրէն Արարատեան գեղարուեստական արուեստանոցին (Studio) ի Շիքակօ, կը ծանուցանէ թէ ամեն տեսակ կենդանագիրներ և տեսարաններ, ու կամ գունաւոր բէսթէլ, ջրաներկ և իւղաներկով կը պատրաստէ, լուսանկարէ կամ կեանքէ օրինակելով. արտասահմանի Հայեր ևս կրնան թղթակցիլ։

Հասցէ

M. K. Serailian
42 Central Music Hall,
Chicago, Ill.
U. S. A.

Մետաքսէ գործուածներու նոր հաստատութեան մը։ Ֆրանսայի Լիոն քաղաքի Duplan & Co. անուն տունը Ամերիկայի մէջ, ի South Bethlehem, Pa., հող գնած է, ուր մետաքսի գործարան մը հիմնարկելու վրայ է, առ այժմ 200 հենքով, որ 400 կամ 500 ի պիտի բարձրանայ եթէ գործերն լաւ երթան։

***

Ա. Մ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկով փոխանակագիր Կ. Պոլսոյ վրայ։ Քաղաքէս հեռու գտնուողք կարող են դրամը ղրկելով փոխ-գիրը ստանալ։

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի։

Հասցէ—
A. & M. KARAGHEUSIAN,
71 Wall Street,
New York, N. Y.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ